ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ՊԵՐՄԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻՆ

Ապրիլի 19-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Ռուսաստանի Դաշնության Պերմի մարզի նահանգապետի պաշտոնակատար Օլեգ Չիրկունովին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող փոխնախարար Վաչե Տերտերյանի և ՀՀ Արտաքին գործերի փոխնախարար Գեղամ Ղարիբջանյանի ուղեկցությամբ:

Ողջունելով Պերմի մարզի նահանգապետի պաշտոնակատարին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ եղբայրական, բարեկամական կապերը շարունակում են առաջընթաց ապրել, զորանալ և արդյունավորվել:

Վեհափառ Հայրապետը նաև գոհունակություն հայտնեց, որ Պերմի մարզում բնակվող հայորդիներն իրենց կարևոր ներդրումն են ունենում մարզի տնտեսական և մշակութային կյանքում և իրենց ազնիվ աշխատանքով ու բարի ծառայություններով կարողացել են բարյացակամ վերաբերմունքի արժանանալ իշխանությունների կողմից:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության և ամենայն հայոց սրբավայր այցելելու հնարավորության համար՝ պրն Չիրկունովը իր հերթին անդրադարձավ Ռուսաստանում հոգևոր կյանքի զարթոնքին: «Մենք զգում և հասկանում ենք, որ մեր ժողովուրդները շատ նման են ինչպես իրենց պատմությամբ, այնպես և հավատով: Ուստի պիտի ջանանք շարունակել ընթանալ եղբայրական հարաբերությունների ոգով՝ գործադրելով այն ի շահ մեր երկրների»,- մասնավորաբար նշեց Պերմի մարզի նահանգապետի պաշտոնակատարն իր խոսքում:

Հանդիպմանը խոսվեց նաև Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների, խոնարհված վանքերի և եկեղեցիների վերականգնման, ինչպես նաև Հայ Առաքելական ու Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև առկա ջերմ կապերի և համագործակցության մասին:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված անսասան պահի երկու ժողովուրդների դարավոր եղբայրությունը: